

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция „Мшакъ“. Կամ Tiflis, Rédaction „Mschak“. Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՆԵՐԻ ՄԵՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և առն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւններ համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Տիեզեր Թամարա Նիթարեան Օտարեանցն իր որդիներով, ցաւօք սրտի յայտնում է բարեկամներին և ծանօթներին իր սիրելի ամուսնու.

ՍԻՄԵՕՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՕՏԱՐԵԱՆՑԻ

Վաղաժամ մահը և խնդրում է պատուել հանգուցեալի յիշատակը և շնորհ բերել շարժ, երեկոյեան ժամը 7-ին ամբիօթին, իսկ կիրակի, ամիս 11-ին, ժամը 10-ին թաղմանը: Պատարագը լինելու է Վանքի մայր եկեղեցում, իսկ թաղումը Նովոմարի գերեզմանատանը: Բերուածվակայա փողոց, տ. № 58.

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Վարչական բարեփոխութեան անհրաժեշտութիւնը Պարսկաստանում. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Եւրոպական զորապետները. Եւրոպական բարբրէր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՒՆՆԵՐ.

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄԻՆԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՏՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՄ

Պարսկաստանի բարձր պետական շրջանները եկել են այն եզրակացութեան, որ ժամանակն է ձեռնարկելու մի շարք բարենորոգումներին՝ զաւառական վարչական կազմակերպութեան մէջ: Օրինակ, հասունացել է այն միտքը, թէ վստակար է նահանգները կապելով մայր նահանգապետներին, մի կարգ, որ դարձրել շարունակ գործադրիչ է իրանի պետութեան մէջ, սպառնալով ժողովրդի արգելադրութեան և անտեսական ոյժը:

Եթէ կայ մի բան, որ կարողացել է զբաղել կապալառու-նահանգապետներին և փրկել ժողովուրդը վերջնական անկումից—զաւառական սովորութիւնների և անարգութիւնների ոյժն է եղել: Կապալառու կուսակալը անկարող է եղել որոշ նուազագոյն չափերից և սահմաններից աւելի ևս նեղել ժողովուրդին, վախճանով մեծ յուզումներով և նոյն իսկ պարսկական վստակարուր բռնկումներից:

Պարսկաստանի գաւառական կեանքի պատմութիւնը զարուհիւն ապացոյցներ է տալիս այն բանին, թէ որ աստիճան կեղծված և հարստանարված է պարսկական գիւղացիներ և թէ ինչպէս ամբողջ տարածութիւններ անկարգ վարչական անտեսութեան շնորհիւ աւելում են և անայանում:

Իսկ երբ վերջ կը արվի ներկայ կապալառուական կարգին և կը մտցնվի ամբողջ Եւրոպայում գործադրվող վարչական սիստեմը, այն ժամանակ գաւառական ժողովուրդը այլ ևս զոհ չի լինի կուսակալի ազատութեան և կը կանոնաւորվի նրա տուրքը որոշ չափերով, որոնց անխախտութեան վրա կը սկսէ կենսաբանական իշխանութիւնը: Այլ ևս կուսակալի բանահաճոյքից չի կախված լինի գիւղի վրա նորանոր ծանրութիւններ բարդելը և ամէն մի փոփոխութիւն առաջ կը գայ խելացի հիմունքների վրա:

Թէհրանի արքունիքը վճռել է առաջ մղել բարենորոգութիւնների մի սկզբնական ծրագիր և փորձ է անում այդ նպատակով խորհրդակցութիւններ կազմել պետական գործողներին և նահանգապետներին հետ: Գործադրելու կամաց-կամաց այդ ծրագրերը: Վաղուց ժամանակն էր բարեփոխութիւնների շաղկի վրա ոտք կոխելու և ուրախվել է, որ Պարսկաստանի բարձր վարչական շրջանները համոզվել են այդ բարեփոխութիւնների անհրաժեշտութեան մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ս Ո Ւ Լ

Հաղար անգամ կրկնված է, որ հայերէն պարբերական հրատարակութիւնները այնքան

աղքատ են, որ միայն տանջանք են պատճառում իրանց անապահով աշխատակիցներին: Համատարած, տիեզերական իրողութիւն է, որ հայը եթէ ունի ազգային աշխարհային անհանձնաշատութիւններ, չէրէջել մէկն էլ այն է, որ նա սիրում է ձիւ հայերէն լրագիր, գիրք: Նա պատրաստ է կարգաւ, նոյն իսկ շատ կարգաւ, միայն թէ ձիւ: Զրի, ինչ ուզում է լինի: Զրի, թէ ինչ կարգաւորութիւններ, նրանց մէջ աշխատողները աղքատութիւնից խեղդամահ լինեն: Այսպէս է դուրս թիւնը ամէն տեղ, ուր հայերէն տպուկով պարբերական հրատարակութիւն է դուրս գալիս: Բայց և այնպէս, պէտք է խոստովանել, որ խմբագրատնոցների անկարգաւորութեան, խեղճութեան և թշուառութեան կողմից անդրանկութեան և առաջնութեան դափնին միշտ պատկանել է Կ. Պոլսի հայերէն: Պարսկաստանի անմահ գրիչը վաղուց է անմահացել պարսկական խմբագիրների և խմբագրութիւնների կենցաղը: Բայց Պարսկաստանի մինչև այսօր այնքան ժամանակ է անցել, որ ներքին պիտի լինէր փոփոխութիւններ, բարեփոխութեան հանգամանքներ նկատել: Եւ փոփոխութիւն կայ, գուցէ ամառուի աշխատաւորների բարոյական հասկացողութիւնների մէջ, բայց երբէք ոչ այն միջավայրի վերաբերմամբ, ուր նրանք աշխատում են: Զմիւռնիայի «Արեւիկան Մամուլ» շաբաթաթերթի թղթակից Վաղինալը մի պտոյտ է արել Կ. Պոլսի խմբագրատնոցների մէջ և հաղորդում է իր տպաւորութիւնները, որոնք ներկայացնում են այնտեղի մամուլի փիլիսոփայական աշխարհը: Տեսարանը հետաքրքրական է և մենք թղթակցի նկարագրութիւններից կը բերենք մի քանի ընդհանուր գծեր:

Ընդհանրապէս խօսելով, թղթակիցն աւսում է.

Մենք կը կարծենք որ Պոլսահայ թերթերը արտօնատնոցները քիչ մը աւելի նախամաքնորոշված կունենային եթէ ոչ պիտի գտնէ վայելուչ գրասենյակներ ունենալու, ի պատիւ հայ լրագրութեան: Կերելի թէ որամի աւելի ճաշակի պակաս է որ մեր հայ խմբագիրները աշխատակի կուտայ անօղ նկուղներու մէջ, և թերեւս ստոր համար է որ անոնց մեծագոյն մասը տեղից, անարիւն մարդիկ են: Գոնէ նկար, դարպասք մը, վայելուչ կահաւորում մը.—բնաւ: Գեղեցկադիտական ճաշակի նշոյն անգամ չը կայ հայ լրագրաց խմբագրատնոցներում մէջ. Ամօթ է ասիլաւ:

Ամօթը ապացուցվում է թղթակցի արած առանձին-առանձին այցելութիւններով:

Ամենից առաջ այցելեցին Մանգուլիի խմբագրատնոցը, որ առաջին տեղը կը բռնէ... աշխարհագրական տեսակէտով: Նրեալայեցիք փայտեայ ցից սանդուղ մը անհատնում աստիճաններով: Գործընթաց է ինչ է: Սանդուղին գլուխը, քառակուսի նրբանցք մը կայ, որու վրա կը բացուին բանի մը դուռներ: Այդ կողմի առաջին սենեակը խառնիճադանք վիճակ մը ունի: Լրագիրներու դէպք մը կը փրանան, կը բրդանան հոն: Կարծես թէ առաքմանց սենեակն է: Անոր բով կը գտնուի հիւրասենեակը, անշուք գրասեղանով մը և քանի մը անոններով կահաւորւած: Բայց ամէնէն աւելի ուշագրաւ է խմբագիրներու սենեակը, լայնահաստ, լուսաշատ, որ սակայն գործողական ճաշարանի մը տպաւորութիւնը կրնէ իր նեղ ու երկայն սեղանով, որուն շուրջը կարգաւ նստած են խմբագիրները:

«Մանգուլի» «Սուրհանդակ» հետաւորութիւնը շատ քիչ է, գոնէ չէնք մտալ: Փայտէ սանդուղի մը աստիճաններէն կը ելնենք առիտարիս, ծախ կողմերիս թողով խաւարակուռ նկուղ մը, զոր հապկ կը լուսաւորէ սակայն լամպար մը, իր շուրջը բոլորած աղտոտ լուսամբով: Պատերուն վրա դաստակէ բրդած ձեռքի իրենց ցուցամատը երկարած են և խմբագրատան բաժանումներուն հասցէները ցոյց կուտան: Հակառակ պայման օդին,

խորունկ մեծութիւն մը կը տիրէ: Կարծես «Գրամին քոլը» կը վարագուրէ նրբանցքին խորհրդապահ անկիւնները, ուր քննադատութենէ դեռ մնալու փափայներ կամ հաշուարկարարութեան պէտքեր կը գործողանան, կը կարգադրուին թերեւս, առանց երբորի մը անհարկի միջամտութեան: Նրբանցքին ամեն կողմէն դռներ կը գտնուի խմբագիրներու աշխատանոցը:

Առաւօտեան երկու մրցակից թերթերուն խմբագրատնոցներն այցելել վերջ, կը մնար տեսնել Բիւզանդիոնի խմբագրատնոցն ալ, որ միւսներէն շատ հեռու չէր բարեփոխութեան: Ուստի քայլերս արագ հոն կը ուղղեմ սա անկախութեամբ թէ—գոնէ թերթին ծաւալէն ու պարունակութենէն դատելով—այս անգամ երազական ձեւով կարգաւորուած և հանգստաւ միջավայր մը պիտի գտնեմ, բայց որչափ մեծ ու զանա նկարագրանքս երբ ոտքս ներս նետեցի արտաքին դրան սենեակը, եւ ու կարճ հողաշատակ գալիք մը, մէկ դիմ քառակուսի կեղտոտ սենեակ մը, եւ քոյր թիւնդայ աման մը, մինչեւ բրանն աղտոտ ջուրով լցնում, խաբիւր թաղիքով խղճածն սանդուղէ մը ելնելով ինքզինքը կը գտնեն մեծ նրբանցք մը, որուն վրա կը բացուին չորս դուռներ: Այլը չէ որ կը կրէ առաջին տպաւորութիւնը, այլ կոկորդը, ծծողով քարիւղի և ծուխի մօրացած կիտաւած մեծաւորութեան: Տպագրական թուղթերուն կարգաւորութեան պարիպներ կը ձեւացնեն անդուրին դուռը, քոյրնախ, ուր որ արաւմուրդի տեղ մը մնայ անհրաժեշտ անցուղիով սահմանված արահետէն, այնպէս որ միջավայրին վարժուած ոտքերը միայն կրնան անայտնաբերել, անխափան երթնել: Քիչ մնաց որ ես, անկարծ մէկը, սանդուղէ վրա դուրս, բայց շուտով ձեռք ձեռքի որդոցուն բազրիքը: Խմբագրապետին սենեակին, օժանդակ խմբագիրներու սրահին և ուրիշ սենեակի մը մէջ մեծութեամբ թուղթի դէպքեր սա համոզումը դրացուցին իմ մէջ թէ Տնօրէնութիւնը նախափորութիւնն ունեցած էր մեծաքանակ թուղթ մեծերու, գիներու ապագայ բարձրացման մը նախատեսութեամբ, բան մը որ բաւական լայնութիւն և երկարութիւն կուտայ:

Առաջին այցելութիւնս կուտամ խմբագրապետ Գէյհան է.Ֆ., յայտնելով թէ տարեկան բաժանորդ ըլլալ կուզէի: Կրնալիս զի այն խորհրդարան ժողովուրդ, որուն մէջ ուրուագծուած կը տեսնեմ անուշ գոհունակութիւն մը, որ իբր թէ ըսել կուզէ. «—Անուշ ուշիմ ընթերցող միմ ալ, որ պիտոյն է գնահատել թերթս»: Խմբագրապետի սենեակը, եթէ ոչ պատշաճապէս, քիչ շատ կահաւորուած կընայ սեպուղի:

Անորոգութեան պատրաստութեան հրահանգը սպասուած պատրուակ մը կրնայ ինձ խմբագրութեան միւս սենեակն անցնելու, որ յարակից է խմբագրապետին սենեակին: Բայց ո՞րպիսի հակապատկեր: Հաստատեցէ որ խորին կարեկցութեան զգացում մը չը կրցայ դադել: Երեւակայեցի ուղղակի ինչ նեղ սրահ մը, հազիւ 3/4—4 կանգուն լայն և 5—5 1/2 կանգուն երկայն, երեք պատուհաններով, ճակատը երկու պատուհաններուն մէջտեղ, քառակուսի սեղան մը, շուրջը հազիւ անցուղիքով կամ մէջքով անոն որոշելու չափ տեղ ունեցած, այնպէս որ խմբագիրներէն մին եթէ նստած տեղէն ելնել ևս անցնելու ուզէ, պէտք է որ միւսներն ալ ելնել և ձաքայլ տան անոր: Սենեակին մնացեալ մասը կը զբաղեն գրաշարներու յատուկ երեք գործասեղաններ, վտարան մը, տպագրական թուղթի կապոյտ արակներու դէպ մը որուն զազան ձեւերով կողովներ: Եթէ դէպք մը կը խմբագրի ուրիշ բան չէր տեսներ, բայց եթէ կոկորդուած թերթեր, թուղթի և անուշի կտորներ վտարանէն դուրս ինկած, վերջապէս անձնակցի խառնափորութիւնն մը: Գրաշարներու գործասեղաններուն տակի հարձ մասին վրա, տեսակ տեսակ կապոյտներ լրագրերու հին ու միմ տպագրութեան ու կոշիկներու, իրենց ան. շարունակեալ քուր կը խորան, փոշոյն հաստ վերմակի մը տակ, միշտ սպասելով ինձնաժողովի մը: Ձեռքդ իր սարդի ոտայնները վար կը կախէ ջանքերու պէս, եւ փոշեպատ պատերուն մերկութիւնը մասսայ սրբութեամբ է եւրօպական հանդէսներէ մրաւատուած գոյնզգոյն նկարներով, որոնց մէջ դեղնորակ թուղթի շերտ մը կը ձեգնուի: Երբ ցուցադրէ, սա ազգաբարձութեամբ. «Հոս թերթը արգիւտած է»: Ձեռք գիտե՛ր թէ այդ գրաշարութեան թերթն անպատակ ունի, գետնի փոշիները ցնիլ չը վերածել եթէ ոչ թուրքերուն և մաղաներուն միջոցով: Ինչպէս կը խոշորանայ այն պատերը, տակաւին աչքիս առջև են: Հոն կը տեսնեմ Պիլմարի փիթարի գիլին սկսեալ մինչեւ Լի-Հուն-Լի-Չանի կիսաբացած դռները, Լէոն ծ-Գ. Պապին բռնեցէ մինչեւ հայր Ալտրեան, կոփամարտիկներու գործած նախնիները նախնիներուն նկարներ, ի դէպ ու յանգիւ իւրար խառնուած, առանց ընտրողութեան, առանց ճաշակի, կարծես լոյ պատին անշաղ մերկութիւնը կամ թափման ձեւերով որորմի տեսքը սրբողութեան փոխարինութեամբ: Այլ կը զարնել սեւ ապակիներ, որոնց թանկարան փոշիները կարծես վարադրի դեր կը կատարէին: Ապակիներուն մէկէ աւելի կտորուածները կուրցուած էին հին լրագիր-լրագիրներու թերթերով: Վերջապէս չուառութեան ճշմարիտ բոյն մը, որուն մէջտեղը դուռն ու գրա-

սեղանին առջև չորս գլուխներ խորարան կաշի-խաւին, առանց զգալու իրենց յամարաւոր թարգմանի ու խաւինը: Այս տեսարանին առջև չորս կարեկցութեան վաղանցիկ զգացում մը զսպել: Երկուրը, բաղադարար յոյժ երիտասարդ, Գէյհան է.Ֆ.-ի զաւակներն ըլլալու էին, գէժ այնպէս կը վկայէր իրենց գինազնութիւնը: Ասոնց լուսնունք այն տան միայն կը խղուէր, երբ գրաշարապետը, ձեռագիր առնելու պատրուակաւ սենեակէն ներս մտնէր, իր յախտնական զանգով միշտ բերանը:

Որքան ալ որորմի ըլլար միջավայրը, ուր կը գործէր Բիւզանդիոնի խմբագրութիւնը, պէտք է խոստովանել թէ աւելի կանոնաւոր ու կարգապահ աշխատութիւն մը կար հոս քան միւս խմբագրատնոցներուն մէջ, եւ թերթին կանոնաւոր ու թարմ պարունակութիւնն ալ վկայ է ատոր:

Թղթակիցը խոստանում է «Արեւելք» և ուրիշ պարբերական հրատարակութիւնների խմբագրատնոցների նկարագրութիւնը յետոյ տալ: Բայց կարելի է վստահ լինել, որ դրանք չեն փոխի այս մտայն ու տխուր տեսարանը, որ ընդհանուր է ամենքի համար: Մնում է հարցնել—բնէն է պատճառը: Թիւրքիայում անհամեմատ մեծ է ընթերցող հասարակութիւնը, և ամենօրեայ լրագիրներ թիւը ցոյց է տալիս, թէ կայ և մեծ պահանջ: Միթէ խմբագրական աշխարհի այս ողբալի վիճակը խմբագիրների անձնական ճաշակի արդիւնք է: Դա, իսկ որ, մեծ ամօթ կը լինէր, եթէ ճիշդ լինէր:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Էջմիա ծնից ստացվել է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի կոնդակը, որով հաստատում է Թիֆլիսի Կուսանաց վանքի նորընտիր մայրապետ Յեփրուսինէ կոյս իշխանազն Արամիսի խմբագրութիւնը իր պաշտօնի մէջ: Կոնդակը կարգաւորելու է առաջիկայ կիրակի, ապրիլի 11-ին, պատարագից յետոյ հետապնաց անապատում:

Երևանի նահանգում հետազոտութիւններ են արված Սարգսիւրաբուր անագին անջրդիւնապատը ոռոգելու տեսակէտից: Նախնիներն գաւառում սկսված են աշխատութիւններ սալվարտիւնեան ջրամբարի համար: Այդ ջրամբարի ծրագրերն ու յատկագիծը կազմված են 1898-ին և ծախքերն արված են այդ շրջանի այն գիւղերի միջոցներից, որոնք օգտվելու են ջրամբարի ջրից: Ջրամբարը շինվելու է նոյն գիւղերի գլուխներով, բովանդակութիւնը լինելու է 55,000 քառակուսի սառնէ, մակերեսով ջր մօտ 10 դեռատար: Արգէն ութ գիւղական շրջաններում որոշված են ջրից օգտվելու պայմանները: Ջրամբարի և ջրաբաշխութեան վարչութիւնը յանձնվելու է շրջակայ գիւղերից ընտրված մի վերահսկող մարմին:

Տեղական լրագիրներին գրում և կամ հեռագրում են, որ թէ Թիֆլիսի և առհասարակ Կովկասի բոլոր պաշտօնական հաստատութիւնները փառաւոր հաղահանգիւտներ են կատարել հռչակաւոր ու կտրիճ ծովապետ Մակարովի և նրա հետ միասին գտնված բոլոր մարտնչողների համար:

Վրացի կապիկազի երկաթուղու գրասենյակում ստացվել են տեղեկութիւններ, որ գիտաւորութիւն կայ Սև ծովի ափերի երկու կէտեր-Սուխումը և Թուրքիան միացնելու առաջին Վրացիկապիկազի, երկրորդը Անգլո-կասի երկաթուղական գծերի հետ, իսկ այդ երկու կէտերը միացնելու իրար հետ ելքաբաղան ևս գտնվում էր ծրագրելու կազմել և առաջարկել է մի ամբիւրեակն ընկերութիւն:

«Մշակ» № 63-ում անք հաղորդել էինք, որ Կոկանդ քաղաքից մեկ ուղարկված է 66 ռուբլի գումար կարօտեալներին բաժանելու համար Ջաղակաւան տօներին: Այժմ մեզ տեղեկացնում են, որ այդ գումարը ժողովված է պատեղի համայնքի մէջ ի. Աղախանեանի և Ղ. Մելիք-Թանգեանի միջոցով:

«ԿԱՅ» լրագրին հեռագրում են Պետերբուր-

գից, որ «Պետրոպոլիս» գրահանքի վրա մեծածափառ Մակարովի այրին և ընտանիքին նշանակված է 20,000 ռուբլի կենսաթոշակ:

Կովկասի տնտեսագործական մասնաժողովի վերջին նիստում նախագահ Ե. Ս. Մեդվեդևին առաջարկեց թիֆլիսում իրեն փորձ կազմակերպելու կովկասեան ճնայնագործական աղյուսակների պահեստ: Մասնաժողովը գտաւ այդ առաջարկը շատ կարևոր և առաջարկեց իր անդամ-գործավար Ա. Ս. Փիրայեանին մշակել մի այդպիսի յարմարաւոր հիմնարկութեան ծրագիր: Նոյն նիստում պ. Փիրայեանը խոսեցաւ մի գործ, որ պատրաստված է նախօրոք տրված նկարների համաձայն իշխանուհի Մ. Թումանյանի նախկին գործադրածական արհեստանոցում, և որն իբրեւ առաջին փորձ բաւական աղող արտադրութիւն է:

«НОВ. ОБ.» լրագրի ասելով Ստ. Կ. Զուբալովը նուրբի 10,000 ռուբլի վրայ մէջ գրադիրութիւն տարածող ընկերութեանը, նրա գոյութեան 25-ամեակի առիթով:

«Русь» լրագրի ասելով Պետերբուրգի լեւնային-հանքաբանական ինստիտուտը մօտ ժամանակներս տեղափոխվելու է Եկատերինբուրգ քաղաքը, որը ռուսական հանքագործութեան կենտրոնատեղին է:

Թիֆլիսի քաղաքային խորհրդի դպրոցաւոր յանձնաժողովի երկու անդամները՝ պ. պ. Լիսիցեանը և Մելիք-Բէգլարեանը մշակել են մի ծրագիր, որը մօտ ժամանակներս կենթարկվի քաղաքային խորհրդի քննութեանը: Այդ ծրագրի հիման վրա Թիֆլիսում պէտք է բացվի մի 4 դասարանական քաղաքային դպրոց Նորին Կայսերական Բարձրութեան Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայիվիչի անունով:

Յանդուգն գողութիւն. Փոթիից եկած լուրերի համաձայն ապրիլի 7-ին պոստվազանից գողացված փողի ընդհանուր գումարը հասնում է 102,655 ռ. 30 կ.: Մանրոցներին և հասարակ թղթակցութիւններին աւագակները ձեռք չեն տուել: Գնացրի Փոթի հասնելուց անմիջապէս յետոյ աւագակութեանը վայրը հասաւ դատաստանական ըննիչի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՁԸ

Ռուս մամուլի կարծիքը մարտի 31-ի տրագիկական դէպքի մասին: Մայրաքաղաքից ստացված թերթերը լի են դատողութիւններով և գնահատութիւններով մարտի 31-ի ողբերգական դէպքի և փոխ-ծովապետ Մակարովի կուրստեան մասին:

«НОВ. ВР.» լրագիրը գրում է ապրիլի 2-ին. «Մահի և ցաւի տպաւորութիւնների մռայլ ֆօնի վրա, որոնք ծագել են «Պետրոպոլիս» սկզբնական պատահած աղէտից և 600 հոգու կորստից խաղաղ Ովկիանոսի ռուսաց ծովային զօրութիւնների հրամանատարի հետ միասին, միթաբարութիւն հանդիսանում է այն հանգամանքը, որ ամեն տեղ գնահատում են վաղաժամ կորած ռուս տաղանդաւոր ծովապետի մտքի, հոգու, խորհման գիտութեան և եռանդուն կարգադրողութեան բարձր որակութիւնները»:

Այս լրագիրը աւելացնում է. «Աստուած փորձում է մեզ դժբախտութիւններով, մէկը միւսի ետեւից աւելի ծանր և սուղալի: Ուրիշ անուն չը կայ, քան սոսկալի, աննկարագրելի դժբաղդութիւն այն վշտի համար, որ երէկ պայթկեց Ռուսաստանի գլխին: Դա կուր չէ թշնամու հետ, դա պարտութիւն չէ, դա համարադրային պատմութեան մէջ անօրինակ դժբաղդութիւն է, երբեք չը տեսնված այն օրից, երբ գոյութիւն ունեն նաւատորմները: Երբեք չէ պատահել, որ նաւատորմի հրամանատարը, իր նստած նաւի հետ, իր շտաբի հետ, այդ ընտրեալ ծովային օֆիցէրների հետ, իր ամբողջ պատասխանութեան հետ, որ բաղկացած էր աւելի քան 600 հոգուց, կորչի մի րօպէում: Լակօնական էր ծովապետ Ալեքսեյի հետագիւրը մեր մի քանի նաւերի կորստեան մասին յունվար 27-ի գիշերը. աւելի լակօնական էր երէկվայ առաջին հեռագիրը: «Պետրոպոլիս» զրահաւորը ցայտել է ականի վրա, պայթել և շուտ եկել: Մեր էսկադրան Ոսկէ սարի ներքոյ է, եսպօնականը ժողովում է: Հնարը որ և է մի ուրիշ դժբաղդութիւն կարելի է որոշել այդպէս

կարճ և մի և նոյն ժամանակ տեսնել նրա մէջ կորստեան բարդ և սարսափելի պատկերը այն նաւի, որ ըթով ընկղմվում է խորութեան մէջ, շուտ է գալիս, բարձրացնելով կոհակներ, շուտ է գալիս իր կայանքով, խողովակներով, թնդանքներով, դէն շարտելով և ջնջելով մարդկանց ծովի յորձանքի մէջ, կառուներում, տրեւմունք, դժոխային աղմուկի, պայթիւնի, աղաղակների և անխօս յուսահատութեան մէջ:

«Ինչ կարելի է աւելի գարնուրելի լինել այդ րօպէներէից, որ ապրեցին հրամանատարը, օֆիցէրները և նաւաստիները: Ով կարող է խօսք գտնել նկարագրելու այդ կորուստը, խօսքեր, որոնք արժանի լինէին ծովային այդ ողբերգութեան, որի մէջ մի տեսակ հրաշքով փրկվեց մարդկանց միայն մի փոքր մասը: Որքան կորաված կեանքեր, կորաված բաջութիւններ, ագնութիւն, անձնագործութիւն, որոնցով լի կարող էին լինել այդ անհետացած կեանքերը, որքան կորաված յոյսեր: Իսկ մենք ամենքս յոյսերով ենք ապրում և մեր հայրենիքը սիրում ենք ոչ թէ միայն նրա համար, որ նա տալիս է մեզ, այլ նրա համար, որ նա խոստանում է մեզ, որ նա կերակրում է մեզ յոյսերով»:

«Русский Инвалид» լրագիրը գրում է. «Չը կայ այլ ևս այն քաջ, փորձված նաւատորմապետ, որի եռանդուն և կարող զեկավարութեան ներքոյ մեր սիրագործ նաւատորմը այնքան մօտ էր մի շարք ծանր հաւուածներ հասցնելուն մեր թշնամուն: Չը կայ այլ ևս պարտակաշտութեան հերոսը, որը, չը նայելով իր բարձր վիճակին, իբրեւ նաւատորմի հրամանատարի, դեռ չորս օր առաջ անցկացրեց Զատիկի մեծ գիշերը ծովի վրա, պաշտպանելով մեր անթափանցելի խաւարը, սպասելով խորամանկ հեծանքների դաւաճան յարձակմանը Բրիտանիայի ծարութեան գիշերը...»

«Вѣж. Вѣд.» գրում է. «Կոչված՝ վարելու մեր խաղաղ-ովկիանոսն էսկադրայի հրամանատարի փառաւոր և պատասխանատու պաշտօնը, փոխ-ծովապետ Մակարովը երգվեց, որ կը մեռնէ և թող չի տայ եսպօնացիներին փախել մեր նաւատորմը Պորտ-Արտուրում, և նա կատարեց իր երդումը»:

«Руссия Вѣдомости» գրում է. «Փոխ-ծովապետ Մակարովը պատկանում է մեր նաւատորմի ամենաժողովրդական ծովապետների թւին և նրա նշանակումը ռուսաց ծովային զօրութիւնների զեկավարի պատասխանատու պաշտօնի համար, ընդունվեց ռուս հասարակութեան կողմից ընդհանուր համակրութեամբ: Հանգուցեալը յայտնի էր և իբրեւ ընտիր պրակտիկ և իբրեւ մինը ծովային գործի ամենախորշ տեսականագէտներից: Նա համոզված կուսակցից էր ներգործական, յարձակողական տակտիկայի, ռուսի երբ յայտնի եղաւ նրա նշանակումը, հասարակական կարծիքը միահամուռ հաւատացած էր, որ ռուսական նաւատորմի գործունէութիւնը Պորտ-Արտուրում աւելի եռանդուն բնաւորութիւն կը ստանա: Եւ իբրեւ, Մակարովի Պորտ-Արտուր գալու օրից, թշնամին իսկոյն զգաց, որ ռուսական նաւատորմը վճռական և եռանդուն զեկավար ունի: Ճիշդ է, ռուսական նաւատորմի գործունէութիւնները միջոց չունեցան որ և է լայն ծաւալ ստանալ, բայց արդէն արածն ևս բաւական է ցոյց տալու համար, որ Մակարովի համբաւը, իբրեւ աչքի ընկնող ծովապետից, բոլորովին արդար էր և ռուս նաւատորմը ունէր մի իրական տաղանդաւոր և եռանդուն պարագլուխ, որի վաղաժամ մահը դժուար փորձարկելի կորուստ է հանդիսանում ներկայումս»:

«НОВОСТИ» այսպէս է ողբում. «Կորաւ մի փորձված ռազմիկ, տաղանդաւոր ծովապետ, որի հեղինակութիւնը ճանաչվում էր ամենուրեք, և մանաւանդ, ծովապետների երկրում, Անգլիայում: Այդպիսի կորուստը վերին աստիճանի ցաւալի է. նրա զանաւորութիւնը ամբողջում է այն գիտակցութեամբ, թէ ծովապետը մեռաւ ռազմական կայանում և թէ կը գրանվեն նրան տաղանդաւոր հետեւորդներ և նրա փառաւոր գործունէութիւնը շարունակուի»:

«С.-П. Вѣдомости» գրում է. «Երբ սկսվեց պատերազմը, մենք պարտաստվում էինք աւելի վատթար պատահականութիւնների: Հոգու խորքում պահելով յուսահատութիւն և վիշտ, մենք պատրաստվում էինք լսել մեր ամբողջ նաւատորմի կորստի, մեր ամբողջութեան՝ Պորտ-Արտուրի անկման մասին. մենք պատրաստ էինք էլիք տեսնել երկվորեւոր աւերումը, երկար, սպանիչ պատերազմ, որից յաղթական զուրս գալ պատուիրում էին մեզ Ռուսաստանի պատիւը և պարտականութիւնը: Բայց այդ

ամենը չը պատահեց: Մեզ ժպտաց երջանկութիւնը, բայց նախախնամութիւնը իր անհասանելի ուղիների մէջ վճռեց նորից մեզ փորձել: Ընդունեց խոնարհութեամբ մեզ առաքած փորձանքը, աղօթեց շերմագին Աստուծուն նրանց համար, որոնք իրանց կեանքը դրին սուրբ հայրենիքի համար և ոչ մի րօպէ կասկածելով, թէ մեր հայրենիքը դուրս կը հանէ նոր նոյնպիսի առաքինազարդ զաւակներ կուր շարունակելու համար և կը գտնէ նրանց մէջ ոյժերի անսպառելի պաշար՝ գործը արժանաւորապէս աւարտելու»:

«Русь» լրագիրը գրում է. «Ամեն մի պատերազմ—կորուստ է: Հասուն ժողովուրդը, որքան էլ ցաւեցնի նրան պատահական մի դժբախտութիւն, չի ընկնի չափազանցութեամբ պեսիմիզմի մէջ: Հասուն ազգը պարտութիւնից ուրիշ եղբայրացութիւն չի անի, եթէ այդ պարտութիւնը նոյն իսկ անյուր լինի, եթէ ոչ այն, թէ պէտք է շարունակել, զարգացնել և աւարտել կուրսը: Դուրս եկաւ կազմից «Պետրոպոլիս»-նրան էլ փորձարկեան ուրիշ զրահաւորներ: Կորաւ վաղաժամ, պատահաբար, քաջ ծովապետ Մակարովը. նրա տեղը կը կանգնեն զեկի մօտ ուրիշ քաջ, խիզախ և ներհուն ծովապետներ: Միայն թէ մեր ծովային զօրքերի շարքերում մնայ ազատ ճանապարհ զեկի տաղանդը, սիրագործութիւնը և փորձառութիւնը»:

Վաղը մենք առաջ կը բերենք եւրօպական մամուլի կարծիքը:

ԵԱՊՈՆԱԿԱՆ ԶՕՐԱՊԵՏՆԵՐԸ

«Standard» լրագրում տպվեց մի ընդարձակ յօդուած, որ նուիրված է եսպօնական զօրքի զլիսաւոր առաջնորդների Բնաւորոյման: Բնւում ենք այն զենեւրանների կենսագրութիւնները, որոնց հետ ռուսաց զօրքերը անմիջական գործ են ունենալու:

Ռուսների հետ պատերազմ վարելու յատակագիծը պատկանում է զենեւրալ Կոչումային: Նա, այսպէս ասած, եսպօնական զօրքի ուղեղն է: Գնեւրալը ծագումով զինւորական ընտանիքիցն է: Նա 50 տարեկան է: Նա ծնվել է Չօլու գաւառում. այդ գաւառումն են ծնվել և Եսպօնայի նշանաւոր մարդկանցից շատերը: 1890 թւին Կոչումայի զենեւրալի աստիճանով Եւրօպա գնաց զինւորական գործը ռուսականներին համար: Չինաստանի հետ պատերազմի ժամանակ նա զինւորական միւսիստերի օգնականի պատասխանատու պաշտօնն էր վարում, և ապա միւսիստեր զարձաւ: Մի և նոյն ժամանակ նա Ֆորմօզայի նահանգապետն էր: 1903 թւին նա ստանձնեց ներքին գործերի միւսիստերի պօրտֆէլը: Նա ստացաւ «Կացին միւսիստեր» մականունը: Կոչումայի սովորաբար ասում է, որ «քաղաքականութեան մէջ, ինչպէս և պատերազմի մէջ, սուր կացինը աւելի լաւ է ըռթ խանչալից»: Երբ Ռուսաստանը գրաւեց Մանչուրիան, նա թողեց ներքին գործերի միւսիստութիւնը և ստանձնեց զլիսաւոր շտաբի հրամանատարի օգնականի պաշտօնը:

Կլիսաւոր շտաբի հրամանատար ֆէլդմարշալ մարկիզ Օյամա երբեք չէ փայլել պատերազմի դաշտերում: Նա իր ծառայութիւնը նոյնպէս սկսեց յեղափոխութեան ժամանակ ապստամբների շարքերում, ապա որպէս զինւորական կցորդ ուղարկվեց Եւրօպա և ֆինացիներին կողմից զենեւրալ ֆրանս-գերմանական պատերազմի ժամանակ, ապա ռուսականներից զինւորական գործը Շվեյցարիայում և Ֆրանսիայում: Ապստամբութեան ժամանակ 1877 թւին նա զօրաբաժնի հրամանատար էր, իսկ պատերազմից յետոյ կրկին Եւրօպա վերադարձաւ շարունակելու համար զինւորական գործի ռուսականներին համար: Հայրենիք վերադառնալուց յետոյ նա մոցնում էր զօրքի մէջ իր մշակած ըէֆօրմները և նշանակվեց զլիսաւոր շտաբի հրամանատար:

Գնեւրալ Տէրաուչի, զինւորական միւսիստեր, պատկանում է նոր չկօլային: Չինական պատերազմի ժամանակ նա կառավարում էր ինտենդանտական մասը:

Գնեւրալ Ֆուկուշիման նոյնպէս մեծ ազդեցութիւն պէտք է ունենայ պատերազմի ժամանակ, որովհետեւ նրան է յանձնված պաշտօնական նշանակելու գործը: 1892 թւին նա ձիով անցաւ ամբողջ Սիբիրով և այդ ճանապարհորդութիւնը ու դրա առիթով նրա զինւորական գեղեցուկները յայտնի դարձրին նրա անունը: Չինական պատերազմի ժամանակ նա զօրաւորի հրամանատար էր: Բուսնց-բաժնարների ապստամբութեան ժամանակ նա կրկին մասնակցեց պատերազմական գործողութիւններին:

Պատերազմի ծրագրի իրագործումը յանձնված է զենեւրալ Կուրօկինին, որը ռազմիկ զենեւրալ է համարվում, աչքի է ընկնում իր կտրիճութեամբ, համարձակութեամբ և եռանդով: «Հարուածները, որ նա հասցնում է,—նկատում է «Standard» լրագրի թղթակիցը,—արագաշարժ են և ծանր, և նրանք, որոնք կը հետեւեն նրան, կը տեսնեն շատ արիւնհեղութիւն»:

Կուրօկին այժմ 61 տարեկան է: Յեղափոխութեան ժամանակ նա նոյնպէս այն ապստամբների կողմն էր, որոնք տապալեցին հին կարգը և յանձնեցին իշխանութիւնը միկաօին: Չինական պատերազմի ժամանակ նա սկզբում մօրիլիզացիայի գործունէ էր, իսկ յետոյ գնաց գործող բանակը և այնտեղ ստանձնեց այն զինվորականներից մէկի հրամանատարութիւնը, որը վերցրեց Վէյիայովէն:

Եսպօնական զվարդական զինվորային հրամանատարն է զենեւրալ Սադզաւա: Նա ծնվեց 1851 թւին: Յեղափոխութեան ժամանակ նա ֆէօդալների կողմակից էր և փորքի զօրաբաժնի հրամանատար էր: Յեղափոխութիւնից յետոյ նա մտաւ կայսերական զօրքը և սկսեց արագ բարձրանալ: Նշանաւոր է այն հանգամանքը, որ միկաօին իր զվարդիայի հրամանատար է նշանակել մի մարզում որը իր գիտակցական կեանքը սկսել է կուրել միկաօին կայսերական իշխանութեան դէմ: Չինական պատերազմի ժամանակ նա բրիգադայի հրամանատար էր, որը հռչակվեց Պօրտ-Արտուրի գրաման ժամանակ:

12-դ զինվորային հրամանատարն է զենեւրալ Ինուէ, որին զինւորները կապիկ են անուանում նրա կարմիր դէմքի համար: Չը նայելով այդ մականունին, նա ժողովրդականութիւն է վայելում զինւորների մէջ: Ինուէին այժմ 51 տարեկան է. 16 տարեկան նա մասնակցեց յեղափոխութեանը. 1877 թւին նա մասնակցեց ապստամբութեան ճնշմանը: Նա Եւրօպայումն էր, երբ սկսվեց չինական պատերազմը: Նա շտապեց վերադառնալու հայրենիք և այնպէս պաշտպանեց գործող բանակը: Մարշալ Եսադաւաւան այդ ժամանակ արդէն մտաւ Մանչուրիա, առաջ գնալով դէպի Պէկին: Ինուէն առաջարկեց մարշալին նախապէս վերցնել Պօրտ-Արտուրը և միայն այն ժամանակ առաջ գնալ: Նրա ծրագրերն ընդունվեց և վերջի վերջոյ աշխուրթեամբ պատկվեց:

2-դ զինվորային հրամանատարն է զենեւրալ Նիշի: 1874 թւին ապստամբութեան ժամանակ նա վաշտի հրամանատար էր: Նա մասնակցեց չինական պատերազմին:

ԵԱՊՈՆԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻՑ

Բանաստեղծութեան տօնը Եսպօնիայում.—Թէ ինչպէս եսպօնական վրէժ է լուծում իր սիրահարից:

Եսպօնական ժողովուրդը երկրաչափ ամենաբանաստեղծական ժողովուրդներից մէկն է: Մագոլ-Արեգալի կայսրութեան սահմաններում ոչ միայն բանաստեղծներն են խօսում մուսաների լեզուով, այլ և հասարակ մահկանացուները, սպասուկներն ու կանաչավաճառները¹⁾: Եսպօնիայում բանաստեղծ է կայսրն ինչպէս և կայսրուհին: Հետեւաբար շատ բնական է, որ այդ բանաստեղծ ժողովուրդը ունենայ բանաստեղծութեան պաշտամունքին նուիրված մի հանդիսաւոր օր: Այդ օրը Բանաստեղծութեան տօնի օրն է, որի գոյութիւնը գուցէ նոյնքան հին է, որքան Նիպոնների ծագումը:

Այդ տօնը կատարվում է ամեն տարի, յունվար ամսում: Կայսրութեան բոլոր բնակիչներին առաջարկվում է մի նիւթ, մի թէմա, որի մասին գրված բանաստեղծութիւնները ուղղվում են միմեկին որոշեալ պայմաններով Միկաօյի կողմից նշանակված բանաստեղծութիւնների Վարիչին: Պատասխանում են կայսրութեան ամեն կողմերից: Վարիչը՝ իր օգնականների օժանդակութեամբ այդ բանաստեղծութիւնների միջից ընտրում է միայն նրանք, որոնք Միկաօյի ընթերցման արժանի են:

Այդ մրցութեան հանդէսը մայրաքաղաքում մասնաւորապէս շքեղ է կատարվում: Աղմկալից քաղաքի կողքին, մոխրագոյն, թանձր ու անվերջանալի պարիսպներով շրջապատված մի ընդարձակ պարտէզ կայ, որ կոչվում է Ցայստուն Աղբիւրների պարտէզ: Կեանքի ժխորից եռուզեռուից հեռու, ամեն ինչ զրկւած ու ֆանտաստիկ է այդ պարտիզում: Պարսպից ներս ոտը կոխող աչքերը շանում են այն հիանալի, երազանաւ դաշտանակարից, պէշգափից, որ տարածվում է նրա առաջ: Այս ու այն կողմ բարձրանում են խոշոր տաղաւար-

¹⁾ Տե՛ս «Մորե»-ի 1904 թ. № 2-ի մէջ տպված «Եսպօնական բանաստեղծութիւնը» յօդուածը:

Քեան անդամները, ուսաց դեպպանութան
սրահառնները, զինուորական և բաղադրացիական
բարձր աստիճանաւորներ և մեծ բաղմութիւն:
ՊԱՐԻՉ: Պետական խորհուրդը՝ իշխանու-
թիւնը ի չարը գործ զենլու մեղադրանքով,
գատի է ենթարկում Պարզիկ, Լիօնի և Տու-
լուզի արքայիսկոյաններին նրանց Լուբէին
ուղղած նամակները պատճառով, որոնց մէջ
դադրում էին միաբանութիւնների անդամներին
գտատուութիւնը արգելելուն ղէմ:

ՍՕՖԻԱ: (Ընդգրկմադիր շրջաններից): Սուրբ
թանը Նաչիվիչին տուած վերջին ունկնդրու
թեան ժամանակ պաշտօնական խոստում տուեց
բէֆօրմները տարածել Ադրիանուպօլսի վրա-
յեթի վրա եւ, բօլգարական կառավարութիւնն
էլ իր կողմից խոստացաւ սուլթանին աջա-
կութիւն ցոյց տալ, որ բէֆօրմների գործա-
դրութիւնը բարի հետեանքներ տայ: Ներում
շնորհված է սօտաւորապէս 1000 բօլգարներ,
որոնք վերադարձան Ադրիանուպօլսի վրայեթը,
վիէնէնԱ, Հօֆբուրգում կայացաւ հանդիսա-
ւոր ճաշկերպութիւն պատմի Ուէյսի պրինցի եւ
պրինցուհու:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻԻՔ-ԱՂԱՄՍԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՄՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուլիա, Վորոնեժի արձանի հանդէպ)

ԱՌԱՅՈՐ, ԲԱԳԻ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԻ ԳՐԱԲԱՐՈՏՆԵՐԸ

ԾԻՊՈՎԱՆԻ—9—10 ժ. աշէր, ներքին և ներադպին։

Մ. Գ. ԱՌԱՅՈՐԱՆՆԵՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վերաբուժութիւն։

Զ. Ի. ԱՌԱՅՈՐԱՆՆԵՑ—11—12 ժ. մանկաբարձութեան և կիսանայ և կիսիայայց հ.

Յ. Ի. ԳՅՆԻԻԿԱ—12—1 ժ. ախանջի, քիւի և կոկորդի հ.

Վ. Ա. ԹՈՐԱՆՆԵՑ—1—1½ ժ. ներքին և երեխա-
յայց հ.

Ա. Գ. ՎԵՐԱՊԵՏՆԵՑ—1—1½ ժ. ներքին և երեխա-
յայց հ.

Բ. Մ. ՍՈՅՈՂՈՎ ՄԱՄԱՆԱՐԴՈՎ. 9—11 ժ.

Ե Ր Ծ Կ Ո Ն Ե Ր Ը

Ն. Ն. ՌՈՍՏՈՐՔԷՅՈՎ—5—6 Ժ. վերաբուժ. մորթու հ
գինեբուկի 5.

Գ. Ս. ԼԵՎԻ—6—7 Ժ. հեաբալային (ելիկարաբուժու-
թիւն), հերքին և ընդերական 5.

ԳԻՆԻՖԻԶՅՆ ԶԵՐԲԻՆԵՆՈւ—7—7 1/2 Ժ. մանկաբարձու-
թեան և կանանց 5.:

Վ. Ա. ՔՍԵՆՆԵՆԵ—7 1/2—8 Ժ.

Վճարք 50 կ. շքաստոյններ ձրի: Համախորհրդի (կոն-
սիլիումի) և օպերատիւրի համար առանձին:

Օ. Ա. ԱՌԿԱՆԵՑԵՎ—տուրի. ծաղիկահատ և բժշկական
մարմամբադ. դիւնի 11—1 Ժ. +

Հիւանդանոցային քնդուովում են և զելեբօթիկ հի-
ւանդներ:

Հիւանդանոցի կառավարիչ՝ ԲԺ. Կ. Ի.
ԳԶԵԼԻՆԵՎ

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ

Ա. Զ. Բ. Ի. Հ. Ի. Բ. Ն. Դ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն. Ն. Ե. Բ.

Ընդունելություն ամեն օր.

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոցեան » 5-ից մինչև 7

Վերլիաւմինսկիական Ժ. № 16, տուն Եղիազար
Բեանի: 49—100

ԲԺԿ. Բ. ՆԱՐԱՍԱՐԴԵԱՆ
ԹԻՖԼԻՍԻ ԳՈՍՏՈՂ
ՀԻՄՆԱԴՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՄ Է 11¹/₂—11¹/₂ ժ. առ
և 7—8 ժ. ԵՐԵՎԱՆԻ:
Б. Садовая, 136, д. Бакалова.
(п. л. в. 5.) 10—100

Բ Ժ Ի Շ Կ

Ա. Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վնասեալ կան ախտ ունեցող հիւանդներին, ամեն օր առաւօտեան 12—2, երկրորդ 5—6: Վե՛ծ ի վանքի փողով, առնէ Կուզանիօլ Բալանիլիօլ զեղարատն կից:

Հոյս տեսաւ № 10.
Մ Ա Ք Ս Ի Մ Գ Օ Ր Կ Ի Յ
ԻՄ ՈՒՂԵԿԻՑԸ
Թարգմ. Արշակ Աճալեան
Դիմն է 10 կող.
Գումարով գնադնեիրն 300% դեղը, ճանաչարճածախը իրանց վրա: Դիմի՛. Въ Типографіи (Пушкинскій пассажъ), Гев. Бабурыня.

Հոյս տեսան
 Հ. Ջ ա մ բ ա գ ե ա ն ի
 «ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ»
 Ա. Ե. Բ. ՎՐԵՐՅԱՆՆԵՐ
 ՄԱՔՍԻՄ ԳՕՐԿԻՅ
 պատմուածքներ
 Ա. Գօրկիէ կենսագրութիւնը պատկերով: Ըն-
 թերցող, Տափաստանուում: Չանձրոյթից:
 Գինը 20 կօպ.
 Բ. Մի անգամ աշնանը: Պանը և իր ողբի-
 լնկերներ:
 Գինը 10 կօպէկ:
 Դիմել գրավածառներին: 1—3

Բ Ժ Շ Կ Լ Պ Ե Տ

Գր. Տէր-Գրիգորեանց

Ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւոր պառէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւններ. 154. Միքայէլեան պրօսպէկտ, տէլէֆօն 825
(շ. ե. հ. չ.) 18—105



Բարձր դասակարգի կա-
նայր ինչպես և գեղեցի-
կ թեև ամենանշա-
նառոց դերասանուհիները
հրաժարվեցին զօժիւր (Cold Creme),
որ դառնանաւ և Իւլիայի
տեղը Ետալիա դէմքին: Դրա
տեղ նրանք դորձ են ածում

(Կրեմ-Սիմոն) զեղեցիկ հոտ ունեցող ար-
տաղբութիւնք, որ երբէք չի փչանում և
պնդացնող ու փափկացնող յատկութիւն-
անի հետ միասին առաւելութիւն ունի
պահպանումը. դէմքի գոյնի շնորհալու-
թիւնն ու երիտասարդական թարմութիւնը:

LA POUDRE SIMON

(Պուդր Սիմոն) La savon à la Creme Si-
mon (Օճառ Սիմոնի) ունի տոյն հոտը և
լրացնում են նրա զարմանալի յատկու-
թիւնները J SIMON 59 Faubourg St.
Martin Paris. Մաս-մաս փաճալովում է
փարսափերներ, պարֆիւրմերներ և զե-
ղադորձներ ձուռ:

(Метилъ) 2. 7—15

ԿՐԾՆԻ ԴԱՍԱԴՐՔԵՐԸ

ԱՅՈՒՆԻՍԿԱՅ ԽԱՄԱՐ

1. Դասատետր	կրօնի	ա.	տարի	.	—	2
2.	»	»	բ.	»	.	2
3.	»	»	գ.	»	.	3
4. Հին-ուխտ		դ.	»	.	—	3
5. Նոր-ուխտ		ե.	»	.	—	4
6. Գործք առաքելոց		զ.	»	.	—	4

ՈՒՆԱԳՅԱՅ ԽԱՄԱՐ

7. Ուղեցոյց	կրօնի—Հին-ուխտի (սպառ.)	—				
8.	»	»	Նոր-ուխտի	.	2	—
9. Ուսումնի քրիստոնէական կրօնի	Դ.	5.	1			
0.	»	»	Ե.	»	—	

Ինձ դիմողները ստանում են 1) 6 տարին ի ի համար 25%₀, 2, 3, 4, 5 տարիներ ի համար 20%₀, իսկ 7, 8, 9, 10 տարիներ ի համար 35%₀ եղջ:

Կարելի է դիմել—1) ինձ (коммерческое училище), 2) Центральная книжная торговля, 3) Книжный магазинъ «Гуттенбергъ».

Սահակ քահ. Սահականյան

70—100

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

 ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

յանձնարարում է

ԻՐ ՅԱՏԿՈՒԹԵԱՄԲ ՅԱՅՏՆԻ

ԳԼԻՑԵՐԻՆԻ ՍԱՊՈՐԸ

Պահպանում է կաշուի փափկությունը

և աւելացնում է սպիտակությունը

ԿՏՈՐԸ 20 ԿՕՊԷԿ

6—10 143,186

(Метцль). (ա. ամս. 10)

Ռւբրաթ, ապրիլի 16-ին, նշանակված է Է
դամնեբր ընդհանուր ժողով՝ բուհարկելու Է
դամնեթեան թիկնածու առաջարկված անձե
Է ըննելու ուրիշ (նորոշական տնտեսական նշ
ցեր:

3, 10, 16 2

ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԴԵՐՎԱՑԱՑՈՒՄ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԱ-ԱՎԽՈՑՈՒԿԱՆ ՐԱՆՔԵՐՈՒՄԵՆ ՀԱ-
ԼԱՔԱՐԻ ԲԱԺԱՆՄԱՆԲԻ
ՄՈՒՐԱՇԿՈՅԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ
ԿԻՐԱԿԻ, ապրիլի 11-ին
Հ Ա Յ Թ Ա Տ Ե Ր Ա Ս Ւ Է Ր Ն Ե Ր Է
Բարեհաճ ժամանակցութեամբ դերասան Ալիխա-
նեանի և Վառլերի
Կ Ը Ն Ե Ր Կ Ա Յ Ա Գ Ն Ե Ն
Առաջին անգամ ժողովրդական բեմի վրա

Վ Ե Ր Ա Ք Ն Ի Չ

Կօմ. 5 գործ., հեղ. Գօգօլի, թարգմ. Տէր-Նատտուրեանի

Մասնակցում էին.—Տիկ. Յովհաննիսեան, օր. օր. Բեկիջեանեան, Հակոբէի, Մարգարիտ, Բնարիկ. պ. պ. Ալիխանեան, Արիտակէսեան, Գրիգորեան, Լաջարեան, Ղուչեան, Մոմճեան, Շա. չիւեան, Չալաբեան, Սարեան Սափաբեան, Վանշիր և ուրիշները:

Տեղերի գները 5-ից մինչև 40 կօպէկ.

Սկիզբն է 8 ժամին երեկոյեան:

Խաղամիջոցներին կը նուազէ երաժշտական խումբը: Թատրոնը լուսաւորվում է էլէքտրականութեամբ:

2—3 Բէժիսօր՝ Ի. Ալիխանեան

« Ծ 2 »

ՆԱԵԲԱՐԴԻԼԱԲԵՐԱԿԱՆ

հրաբուրում է պ.պ. բաժնետերերին կերակրել, մը 7-ին, Թիֆլիսի քաղաքային խորհրդի դատարանական ընդհանուր ժողովի նիստը, որ 8-ին

„Գուտտեկերդ“ գրախաճառանցում փաճառվում եմ

հետեւեալ նոր հրատարակութիւնները

«Գործարան թէ երկրագործութիւն», քմ. Ա. Բուզուզեանի 15 կ.:

«Վարժապետութիւն» թարգմ. Լեւոն Մ.—Աղ. 5 կ.:

«Մէլիք, պատկերներ հայ գեղական կեանքի», Թ. Փանկանցի 25 կ.:

«Հոգեբանութեան հիմնական գաղափարների մասին», Ստրախովի 40 կ.:

«Եկեղեցու և պետութեան յարաբերութիւնները», թարգմ. պ. Տէր-Յակոբեանի 30 կ.:

«Նոր-պետութեան վերաբերմունքը զէպի կրօնը», թարգմ. Գ. Ալթունեանի 25 կ.:

«Ազատ երգչու», Գրամու-Քաթիպայի 5 կ.:

«Մեր Խնչոն», Պոռնիանի 10 կ.:

«Հնտիք հատուածներ», Յով. Նազարեանցի ք. մաս 1 ք. 25 կ.:

«Աղբատին պատու կամ նախախնամութեան մասը», 4 հատոր, Ալթունեանի 2 ք.:

«Իշխմութիւն և զիտութիւնը», Բընանի 40 կ.:

«Արարատը սուրբ զրոց մէջ», Վէրէրի, թարգմ. հայր Պէլէգիկեան 40 կ.:

«Ինուստանիքի ազատ ընթերցանութիւնը», Տէր-Միրաբեանի 60 կ.:

«Փունջ կամ սէր, կնայք և ամուսնութիւն», թարգմ. Օրբէլի 50 կ.:

Լոյս տեսաւ «Գուստէնբերգ» գրականութի ընդարձակ գրացուցակը: Յանկա
ցողներին կը ուղարկվի օրի:

Դիմել: Книжный магазинъ „Гуттенбергъ“ (Дворцовая), Г. Гадустяну.

3—3

ԿՈՂԿԱՍԵԱՆ ԳԼԽԱՌՈՐ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հնկերութեան **ԳՐԱՄՄՓՈՆ** Ռուսաստանում


Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպեկտ, Արևիկայի տուն № 7.

Հասցեն հեռագրով Թիֆլիս

ԳՐԱՄՄՓՈՄՊԱՆԻԱ.

Հեռախոս № 69.

ՇԱՏ ՏԵՍԱԿ՝ ամենա-
կատարելագործված սա-
լոնական և կոնցերտային
գրամոֆոններ:



Մեծ քանակութեամբ անշուկ պլաստիկաների յայտնի է նշանաւոր երգիչներէ, ինչպէս են.—Ռուսաց, վրաց, իտալաց, քրէական, պարսկական, ամերիկական, իսպանական, անգլիական, իսլամական, գերմանական և ուրիշները:

ՊԼԱՍՏԻԿԱՆԵՐԸ ԸՆՏՐԵԼԻՄ ինչպէս ենք ուշադրութիւն դարձնէք մեր ֆաբրիկայի գործիքն «Գ Ր Ո Ղ, Հ Ր Է Տ Ա Կ» առանց մեր դրօշի ընդունել՝ ինչպէս կեդրւած:

Պ ա հ ե ս տ ու մ կ ա յ արհեստանոց, որտեղ հարկաւոր եղած ժամանակ կարելի է նորոգել փայտած ապարատները: Գրամաֆօնի ուղիղ ըսնելու համար տրվում է եւրաշխատարական թերթ 3 տարի ժամանակով:

Ուղարկելիք ապրանքների արկղը և այլ ծախսը գնողների հաշին:

ՈՂԴԱՐԿԵԼԻՄ ապարատների երկաթեղուլու բոլոր կայարանները, եւրոպական Ռուսաստանի սահմաններում (ամառը ի հաշիւ առած ջրային ճանապարհների նաւահանգիստները) կապարվում է պահեստի հաշին:

Պատուով ուղարկած ապրանքների ծախսը, պահեստը ընդունում է իրան հաշին կէսը:

Ս ծ ա ծ պ լ ա ս տ ի ն կ ա ն ե Ր միայն մեր բաց թողած գործով «Գրող-հրեշտակ» յետ է ընդունվում ներքոյ յիշեալ գներով.

Փոքր սովորական » էկաւրայ	{ }	հատը — 50 կօպ.	{ }	Մեծ սովորական » էկաւրայ	{ }	հատը 1 ու. 00 կօպ.
Գիրգանտ սովորական » էկաւրայ		{ }		հատը 1 ու. 30 կօպ.		{ }

Կիրակի օրերը խանութը փակ է. հասարակ օրերը բաց 8¹/₂ առաւ. մինչև ժամի 9-ը երեկոյեան:

Պահանջեցէք պատկերազարդ արեշտուհիներ:

Գումարով գնողներին ուղարկվում է Օպէովի պրէյսիւրանները պահանջելուն առաւ. Պահանջելու փակագումար յերեքտոտ գրամաֆօնի համար, գինը 1 ու. 50 կ.: 28—50

ՆՐԱԻՆ

Խնդրում ենք շնորհ բերել Աւետիայ Զգրահեան եկեղեցին, ապրիլ ամսի 11-ին, կիրակի, ս. պատարագից յետոյ, ժամը 12-ին, մեր եկեղեցու 1903 թվականի եւ մտից հաշիւները քննելու եւ եկեղեցու նստքին բարեխորոզման եւ բարեկարգութեան անսխիւ խորհրդածիւր:

Նրէցփոխ Ալէքսան Գալանթաբեան

(2. 4.) 1—2

ՔիիժՕ Գիշի

(Vin de Bugeaud)

Տօնիբական և սննդարար—բինբի
նայի և կակաօի գինի:

Ֆրանսիական տօնիբական գինին
առողջացնում է երեւաերին, կա-
նանց, ծերերին և բոլոր թուկա-
ցածներին:

Գնելում է Ռուսաստանի դեղասե-
րում:

Ծախվում է մեծ քանակութեամբ
P. Zebeault et C^{ie} 5, rue Bourg-
l'Abbé, Paris.

(2.)

9—12

Պ Ա Յ »
 (նկերութեան Վարչութիւնը
 Ներկայ ապրիլի 11-ին, երեկոյեան ճիշդ ժա-
 նիճը շարունակելու ընկերութեան աարեկիւ
 կայացաւ անցած մարտ ամի 30-ին և ապրիլի
 (2- Կ-) 1—2

ստանոցում վաճառվում են

ր ա ր ա կ ու թ ի լ ն ն է ր ը
 չուղղուղեանի 15 կ.:
 ր, թ. Փանեհանցի 25 կ.:
 ախին», Ստրախովի 40 կ.:
 ր», թարգմ. պ. Տէր-Յակոբեանի 30 կ.:
 ը», թարգմ. Գ. Ալթունեանի 25 կ.:
 մաս 1 ր. 25 կ.:
 առը», 4 հատոր, Ալթունեանի 2 ր.:
 կ.:
 մ. հայր Պէկէղիկեան 40 կ.:
 էր-Միրաբեանի 60 կ.:
 թարգմ. Օրբէլի 50 կ.:
 նութի ընդածակ գրացուցակը: Յանկա
 3—3

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
Ն ՈՐԱՍՏԱՆՈՎ
ԿԱՆՈՆ Ձ 7.

A detailed black and white illustration of a vintage gramophone. The large, flared horn is the central focus, with the words "ГРАММОФОНЪ" and "МОНАРХЪ" written in bold, white, Cyrillic capital letters. The gramophone's wooden base, tonearm, and stylus are visible. The entire illustration is set against a light, textured background.

արի յայտնի և նշանաւոր երգիչներին, ինչպէս
 պարսկական, ճանկական, լեճական, ֆրան-
 ան, գերմանական և ուրիշները:
 ենք ուշադրութիւն դարձնէք մեր ֆարբի-
 ռ առանց մեր դրօշմի ընդունել՝ ինչպէս
 որտեղ հարկաւոր եղած ժամանակ կարելի
 է ֆօնի ուղիղ բանիւռ համար արվում է ե-
 ւ:
 այլ ծախսը գնողներին հաշւին:
 ու բոլոր կայարանները, եւրօպական Ռուսա-
 յան ջրային ճանապարհներին հաւահանգիստ-
 ր, պահետը ընդունում է իրան հաշւին կէսը:
 մեր բաց թողած դրամով «Գրող-հրեշտակ»
 Մեծ սովորական } հատը 1 ո. 00 կօպ.
 » էկստրայ }
 Տամանիօ » 1 » — »
 արակ օրերը բաց 8 1/2 առաւ. մինչև ժամի
 անցները:
 Սպէտիլ պընէյսկուրանանիւր պահանջելուն
 ամսօթօնի համար, գինը 1 ր. 50 կ.: 28—50